ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը՝

Արամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Էմանուիլ ՄԿՐՏՉՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԴԵՄ SHAMSHYAN.COM ԿԱՅՔԻ՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԿ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտորդ մարմին է դիմել **«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»** հասարակական կազմակերպությունը՝ ընդդեմ Shamshyan.com կայքի՝ 2015թ. փետրվարի 8-ին հրապարակված **«ՃՈ աշխատակիցները տաք հետքերով բռնեցին SAS սուպերմարկետից սննդամթերք գողացողին. բռնողների թվում էր SAS-ի սեփականատիրոջ անվանակիցը. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ, ՏԵՍԱՆՅՈՒԹ»** վերտառությամբ լուրի:

Դիտորդ մարմինը համարում է, որ **«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»** ՀԿ-ն տվյալ գործով պատշաճ դիմող է, քանի որ զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ, ինպես նաեւ հետևում է, թե ինչպես են ԶԼՄ-ները պահպանում էթիկական սկզբունքները այդ խնդիրները լուսաբանելիս:

Կայքի խմբագիր, ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը չի առարկել, որ Դիտորդ մարմինը քննարկի խնդիրը եւ տա իր եզրակացությունը:

Դիտորդ մարմինն իր 2015 թվականի ապրիլի 2-ի նիստում քննարկեց վերոնշյալ բողոքը եւ առաջնորդվելով իր աշխատակարգի 5.1 հոդվածով, ըստ որի՝ «ԴՄ-ն ինքնակարգավորման նախաձեռնության անդամների կողմից կամ սույն աշխատակարգով նախատեսված դեպքերում՝ ոչ անդամների կողմից Վարքականոնի խախտման վերաբերյալ բողոքների քննության հիմքով կայացնում է կարծիք-եզրակացություն», ինչպես նաեւ՝ աշխատակարգի 5.8 եւ 5.9 կետերով, արձանագրեց.

1. 2015 թվականի փետրվարի 8-ին Shamshyan.com կայքում հրապարակված է **«ՃՈ աշխատակիցները տաք հետքերով բռնեցին**

SAS սուպերմարկետից սննդամթերք գողացողին. բռնողների թվում էր SAS-ի սեփականատիրոջ անվանակիցը. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ, ՏԵՍԱՆՅՈՒԹ» վերտառությամբ լուրը (լուսանկարները եւ տեսանյութը Լեւոն Ամիրզյանինն են. վերջինս, Գագիկ Շամշյանի պարզաբանմամբ, պատահաբար ներկա է եղել միջադեպին), որում, լուսաբանելով ՍԱՍ սուպերմարկետի մոտ գողություն կատարելու կասկածանքով անձի ձերբակալությունը, հանցագործությունը ներկայացվում է իբրեւ հաստատված փաստ: Բացի այդ, տրվում են մարդու անունը, ազգանունը, բնակության հասցեն, այսինքն՝ տվյալներ, որոնք կարող են նույնականացնել անձին:

2. Դիտորդ մարմինը համարում է, որ ե՛ւ անձնական տվյալների հրապարակումը, ե՛ւ կատարվածն իբրեւ հանցագործություն ներկայացնելը խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը եւ հակասության մեջ են ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի 4.5 կետի հետ, որում ասված է. **«Պահպանել անմեղության կանխավարկածը. մինչև դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատավարության իրավունքի և հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջև»:**

3. Միաժամանակ, Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ մարդու անձնական կյանքին չմիջամտելը լրագրողական էթիկայի կարեւորագույն սկզբունքներից է: Այն արձանագրված է նաեւ Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի 4-րդ բաժնում: Վարքականոնի 4.1 կետում նշված է՝ **«Հարգել եւ պաշտպանել մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. հասարակական անհրաժեշտությամբ կարող է արդարացվել միայն պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին միջամտությունը»:** Դիտորդ մարմինն արձանագրում է, որ տվյալ նյութում ներկայացված անձնական տվյալները արդարացված չէին հասարակական անհրաժեշտությամբ, կասկածյալը հանրային դեմք կամ հանրային ուշադրության ձգտող անձ չէր:

4. Դիտորդ մարմինը հիշեցնում է նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի «Լրատվամիջոցներով քրեական դատավարությունների մասին տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ» Rec (2003)13 հանձնարարականի հավելվածի 8-րդ սկզբունքը, որում ասված է. **«Կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների կամ քրեական գործի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվության**

մատուցումը պետք է կատարվի Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված՝ մասնավոր կյանքի պաշտպանության նկատմամբ հարգանքի դրսեւորմամբ: Հատուկ պաշտպանվածություն պետք է տրամադրվի անչափահասներին, կամ այլ խոցելի անձանց, ինչպես նաեւ տուժողներին, վկաներին եւ կասկածյալների, մեղադրյալների ու դատապարտվածների ընտանիքներին: Բոլոր գործերում պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն վտանգավոր հետեւանքներին, որոնց կարող են ենթարկվել այս սկզբունքում հիշատակված անձինք՝ տեղեկատվության բացահայտման հետեւանքով իրենց ինքնության հրապարակայնացման դեպքում»:

Ընդունելով, որ քրեական լուրերը մեծ լսարան ունեն եւ հետաքրքրություն են առաջացնում, Դիտորդ մարմինը հորդորում է Shamshyan.com կայքին եւ մյուս գործընկերներին, նման հրապարակումների ժամանակ առաջնորդվել ընդունված էթիկական չափանիշներով՝ հավասարակշռություն ստեղծելով հասարակության տեղեկացված լինելու իրավունքի եւ անմեղության կանխավարկածի պահպանման պարտականության միջեւ:

Ընդունվել է Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2015 թվականի ապրիլի 2-ի նիստում, ԴՄ հետեւյալ կազմով՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երեւանի մամուլի ակումբի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ, իրավաբան
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 48-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների էթիկայի Վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2007 թվականի մարտի 10-ի ժողովում: